73(2Ц14.1
Л-30

1914 р

1911-12
12-13

Г14-162а
373 (Հայաստան)
Տ-30
0120-10
904
2386

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Վերատուգիչ Յանձնաժողովի զեկուցումը

Եւ

Հոգաբարձութեան բացատրութիւնը

$19^{11}|_{12}$ ԵՒ $19^{12}|_{13}$ ՈՒՍ. Տ. Տ.

1210/15/14

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Էսպերանտօ» Ելիզ. 17.
1914

10 OCT 2013

52.119

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ
Ս. ԿՄ Ա. Ալիշանի
Մեսրոպ Մաշտոցի անվան

39718-63

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19^{11}_{12} և 19^{12}_{13} ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՇԻՎԵՏՒՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՒՄԸ

1914 թ. Ապրիլի 14-ին սկսեցին դպրոցի Վերաստուգիչ Յանձնաժողովի պարապմունքները և յանձնաժողովս անմիջապէս գործի անցաւ։ Առաջին ժողովից յայտնի եղաւ, որ պ. Ս. Շահվերդեանը հրաժարուել է, իսկ Գ. Սարեանը մի շարք ժողովներից յետոյ իբրև պահեստի սպայ պաշտօնի կոչուելով, թողեց պարապմունքը, որով յանձնաժողովս բաղկացած էր երեք անդամից՝ բժ. Տիգրան Թադէոսեանց, Առաքել Աւագեանց և Հայկ Տէր-Աստուածատրեանց։

Յանձնաժողովս Հոգաբարձութեան ներկայացրած 1911/12 և 1912/13 թ. թ. ձեռագիր Տեղեկագիրը գտնելով ոչ վերջնական ձևով գրած, որովհետև նրա մէջ կային ուղղումներ և Հոգաբարձութիւնն էլ չէր ստորագրել, ետ վերադարձրեց վաւերացնելու համար, սակայն Հոգաբարձութիւնը նպատակայարմար համարեց տպագրել, որը վերաստուգման ենթարկուեց։ Վերջին հանգամանքը պատճառ եղաւ մի առ ժամանակ ընդհատելու պարապմունքները։

I Գործավարութիւն

Ա. Գործավարութեան մէջ նկատելի հարցն այն է, որ 1911/12 օրագրի և ժուրնալի մէջ բացակայում են գործողութիւնների մանրամասնութիւնները, իսկ ընդհանուր պատկեր ստանալու համար ցանկալի է, որ հաշուապահական գրքերում գործողութիւնները մանրամասնօրէն արձանագրուին։

Բ. Դիտելով օրդերների տեսրները, յանձնաժողովս գտաւ, որ հակառակ ընդունուած ձևի Հոգաբարձուի և հաշուապահի ստորագրած օրդերները, որոնք գանձապահին ելքի և մուտքի հրաման են տալիս, մնում են գործերում, իսկ գանձապահի մօտ մընում են այն կարօնները, որոնց վրայ հէնց իր՝ գանձապահի ստորագրութիւնն է, որով վաւերացուում է վճարը։ Կարօնը պէտք է ծառայի իբրև փաստ իրական ելքի և

մուտքի և կցի գործին, իսկ օրդերը՝ իբրև կարգադրութիւն Ճնայ գանձապահի մօտ։ Ցանկալի է, որ այս ձևը գործադրւի։

Գալով օրդերներով գործողութիւններ կատարելուն, պէտք է նկատել, որ արմատների մէջ մեծ մասամբ բացակայում է օրդեր կազմողի՝ գրողի ստորագրութիւնը, որ անհրաժեշտ է։

Երբ մի գումար վճարւում է մի քանի մարդու, ստացող-ստորագրողը պարտաւոր է գրել թէ, որ հաւասարմաթղթի հիման վրայ է ստանում գումարը։ Ճիշտ է, գործերի մէջ կան հաւասարմաթղթեր, սակայն ստորագրելիս պէտք է յիշել այդ ամենն անգամ։

Գ. Ստուգելով գրամարկղի մատեանները և համեմատելով յօդւածներն իրենց գումարներով օրդերների հետ յանձնաժողովս գտաւ կատարեալ համապատասխանութիւն, միայն գալով կալւածների վարձագրքոյկներին երևաց, որ գումարները մէջ-մէջ ստացւել են մաս-մաս, սակայն վարձագրքոյկներում միանւագ ստանալու ստորագրութիւններ են տրւած. օրինակ՝ 20 կրպակներից Սարգիս Աբգարեանի վարձագրքոյկը, որի մէջ ստացւած գումարները գրւած են միանւագ, իսկ հաշւեմատեանում դրանք նշանակւած են մաս-մաս՝ 1 ր. 90 կ. +8 ր. 10 կ. դարձեալ 1 ր. 90 կ.+ 8 ր. 10 կ. և այլն. Վարձագրքոյկներում պէտք է գրել միայն այն գումարը, որ վարձաւորը վճարել է իրականապէս և հաշւեմատեանում էլ նշանակել նոյնութեամբ։

Դ. Գալով Ա. Փիրոյեանի կտակած շէնքի կառուցման վերաբերեալ 61 գործերին, յանձնաժողովս գտաւ, որ այդ գործերի մէջ կան վաւերաթղթեր, որոնք սիստեմատիկ կերպով չեն դասաւորւած. օր. № 7/1912 թ. Գործի մէջ կան վաւերաթղթեր, որոնք ոչ մի կապ չունեն այդ Գործի հետ։ Ընդհանրապէս գործերի մէջ խախտւած է ժամանակագրական դասաւորութիւնը և որ գլխաւորն է, թէպէտ վաւերաթղթերը համարակալած են, սակայն գործերի սկզբում չկան վաւերաթղթերի ցանկերը (опись), մինչդեռ գործ կազմելու համար անհրաժեշտ է հէնց սկզբում կցել այդ գործի ցանկը և նպատակայարմար կլինէր, որ Հոգաբարձութիւնը տպագրէր առանձին բլանկներ։

Դպրոցի նոր շինութեան գործերը կազմւած են կանոնաւոր և սիստեմատիկ կերպով, կան ցանկեր, մասամբ պահւած է ժամանակագրական կարգը, բայց այստեղ էլ մէկ-մէկ բացակայում են վաւերաթղթերի կապակցութիւնները. օր. №1 1912/13 թ. Գործում, մի ֆիրմա ուղարկել է նախահաշիւ նամակով, որից նախահաշիւը գտնւում է համապատասխան Գործում, իսկ նամակը, որ վերաբերում է նոյն նախահաշիւին, մնացել է № 1 Գործում, մինչդեռ նախահաշիւների Գործի մէջ պէտք է լինի և դրանց վերաբերեալ ամբողջ գրագրութիւնը։

II. Կտակարարների յատուկ դրամագլուխը

Ա. Ինչպէս անցեալներում, այնպէս էլ այս անգամ առանձին ուշադրութեան արժանի է կտակարարների յատուկ դրամագլխի հարցը։

Ընդհանրապէս յանձնաժողովս կարևոր հարցերից մէկն է համարում տպագրւած ունենալ բոլոր կտակները, որպէսզի միանգամ ընդմիշտ լինի մի գիրք, որտեղ պարզ յիշատակւեն թէ ինչ նպատակներով են տրւած կտակած գումարները, որովհետև կան կտակների մէջ յիշատակւած ցանկութիւններ, որոնք ճշտութեամբ չեն կատարւում։ Դպրոցիս բարերար Յովսէփ Էֆենդեանի կտակում ասւած է, որ չքաւոր հայ օրիորդներին ամուսնութեան նպաստ տալու համար յատկացւում է տարեկան 150 ր., որը երեք տարի շարունակ չէ տրւած։ Միևնոյն բարերարը կտակի մէջ պարզ ասել է, որ գումարի անգործածիր մնալու դէպքում պէտք է գործադրել չքաւոր աշակերտների օգտին։ Այսպիսով կտակարարի որոշ կերպով արտայայտւած կամքը չէ կատարւած և աշակերտութիւնն էլ զրկւել է։ Ցանկալի է, որ այդ գումարը նպատակին ծառայի։ 64-րդ երեսում կգտնէք, որ այդ գումարը հասել է 550 բուբլու։

Բացի այս տիկ. Նունէ Եւանգուլեանը կտակելով 10,000 ր., որոշել է տոկոսներից տարեկան 75 ր. յատկացնել իր հոգեհանգստին. այդ գումարի մի մասը տրւել է հոգևորականներին, իսկ միւսը՝ չքաւորներին համաձայն կտակարարի կամքի։ Հոգաբարձութիւնը վճարելով հոգեհանգստեան ծախքերը, մնացեալը կարող էր յատկացնել չքաւոր աշակերտներին։ 1911/14 թ. 75 ր. չէ ծախսւել, թէպէտ մեր հաւաքւած տեղեկութեանը նայելով հոգեհանգստեան կարգը կատարւել է։

Բ. Ինչպէս յայտնի է, կտակարարների յատուկ դրամագլխի ստւար մասը ծախսւել է շինութիւնների վրայ, որով դպրոցի կալւածների եկամուտները զգալի չափով աւելացել են, բայց ցանկալի է, որ Հոգաբարձութիւնը իւրաքանչիւր տարի այդ եկամուտներից մի որոշ գումար յատկացնէր վերականգնելու կտակարարների յատուկ դրամագլուխը։ Ցանձնաժողովս կարող է ցոյց տալ մի աղբիւր ևս, որով մասամբ կարելի է առաջն առնել. դա այն 3000 ր. է, որ ցարդ տարէցտարի տրւում էր ուսուցչական թոշակարկղին, իսկ այսուհետև վերջանալով վճարելի գումարը, այդ գումարն ևս կարելի է յատկացնել կտակարարների յատուկ դրամագլխի վերականգման։

Գ. Ինչպէս 1911/12, այնպէս էլ 1912/13 թ. թ. «Կտակարարների յատուկ դրամագլուխ» վերնագրի տակ տեսնում ենք գանազան պատահական նւէրներ՝ օր. Թիֆլիսի Ժողովարանից տարէցտարի տրւող 180 բուբլին։ Յաջորդ տարին՝ Ժողովարանից 180 ր. պ. Մ. Խաչունցից 50 ր. և տիկ. Սոֆիա Լազարեանից 200 ր.։ Ցանկալի է առանձին հաշիւ բանալ։

Դ. Կտակարարների դրամագլխից ստացւող տոկոսներից չեն գործադրւել 1911/12 թ. 444 ր. 58 կ. և 1912/13 թ. 719 ր. 43 կ., ընդամենը 1164 ր. 01 կ. և այդ գումարը միացւելով կտ. յատ. դրամագլխին՝ 190,522 ր. 68 կոպէկին դրամագլուխը փոփոխութեան ենթարկւելով դառել է 191,686 ր. 69 կ. մինչդեռ այդ դրամագլուխը պէտք է լինի անփոփոխ մինչև որևէ նոր կտակով նոր գումար ստացւի, իսկ 1164 ր. 01 կ. պէտք է ցոյց տրւէր առանձին, իբրև ծախսւելիք գումար։

Ե. 1908 թ. Սարգիս Քոչարեանը քաղաքիս VIII-րդ քաղաքամասում Դէսիմեանով

սկայա հրապարակի վրայ գտնուած իր № 64 տունը կտակել է դպրոցին, կտակակատար նշանակելով Միքայել Սարգսեանցին։ Հոգաբարձութիւնը հիմնելով հոգաբարձու բժիշկ պ. Յովհաննէս Իգիթեանի բանաւոր զեկուցման վրայ որոշել է հրաժարել այդ կտակից և կարճել գործը։ Սրդեօք Հոգաբարձութիւնը գործադրել է այդ կտակի վերաբերմամբ բոլոր միջոցները։

III. Կալուածների շահագործումը

Ա. Յանձնաժողովս մի առ մի հետաքրքրելով կալուածքների շահագործման մանրամասներով, նկատում է, որ դպրոցը 1911/12 թ. կալուածքների դատարկ մնալուց վնաս է ստացել 9947 ր. 52 կ., 1912/13 թ.ին 14364 ր. 24 կ.։ Գլխաւորապէս դատարկ է մնացել Աւ. Փիրոյեանի շէնքը, որ տուել է առաջին տարի 7055 ր. և երկրորդ տարի 11163 ր. 86 կ. վնաս։

Բ. 1911/12 թ. ունեցել ենք այնպիսի վարձողներ, որոնք իրանց համար սովորութիւն են դարձրել չվճարել, ինչպէս օր. 20 կրպակներում Սարգսեան Մկրտիչ 18 ամիս վարձը չի տուել. շուկայի 18 կրպակներում՝ Կոլիաշվիլի, Կերվալիձէ, Բեջիաշվիլի, Զարգարեանց, Շախալով ամիսներով պարտ են մնացել։ Շուկայի սեղանատեղերը, որ մեծ մասամբ գնահատւում են 3—7 ր. մեծ մասամբ ապառիկ են մնացել և 58 վարձաւորից երեք հոգի վճարել են կանոնաւոր։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ կան վարձաւորներ, որոնք Թիֆլիսում յայտնի են իբրև ունեւոր և մի շարք ֆիրմաների տէրեր, բայց վճարում են ոչ միայն անկանոն, այլ և գործը մինչ իսկ դատարան է հասել։ Այստեղից պէտք է եզրակացնել, որ ժամանակին չվճարելը մի տեսակ վարակիչ հիւանդութեան է փոխուել։

Գ. Շուկայի սեղանատեղերի մէջ սարայ կոչուած տեղում № № 2, 3, 4 և 5 տեղերը տրուած են եղել ձրի՝ առաջինը Սարգիս Քոչարեանցին և վերջին երեք տեղերը Սահակ Օրդոյեանցին։

Դ. Վարձաւորներից շատերը վարձագրքոյկներ չեն ունեցել։ Վարձագրքոյկներ չեն ունեցել Թիֆլիսի արհեստաւորաց վարչութիւնը, Տէր Աղէքսանդրեան Վաչէ, Զախալեանց Արժենակ, Բրինձեան Կիւրեղ և այլն։

Այս առթիւ պէտք է նկատենք, որ Հոգաբարձութիւնը պարտաւոր էր միջոցներ ձեռք առնել առանց վարձագրքոյկի չթողնելու վարձաւորին։

Դ. Տիկին Ե. Նագիրեանից գնուած և նուիրաբերուած հողի մասին Տեղեկագիրը մանրամասնութիւններ չի տալիս, մինչդեռ այդ հողը բաժանուած է հողաբաժինների և վաղուց վաճառւում է. վաճառուից ստացուած է 1912/13 թ. 8610 բուբլի։

Զ. $19^{11}/_{12}$ թ. ընթացքում ժամանակին չվճարելով անշարժ կայքերի գնահատման տուրքը (оцѣночный сборъ) 3329 ր. 75 կ. և հողային հարկերը (налогъ) 3470 ր. 33 կ. կալուածները ենթարկուել են սէկվէստրի։

Այդ մասին նախկին Վերատուչիչ Յանձնաժողովը իր զեկուցման մէջ Հոգաբարձութեան ուշադրութիւնն է հրաւիրել միջոցներ ձեռք առնելու այդ բանի դէմ՝ պարտքի համար տուգանք—տոկոս (пеня) չվճարելու, որն խոստացել են կատարել, սակայն կրկնուել է այդ և 346 ր. 67 կ. տուգանք-տոկոս է վճարուել, որ միանգամայն անփութութիւնից գոյացած մի կորուստ է։

Է. Յանձնաժողովս ցանկալի է համարում, որ այսուհետև դատարկ մնացող բնակարանների և խանութների համար ամսէ-ամիս մի տեղեկագրոյց գրուի վաւերացրած Հոգաբարձութիւնից, որը կարող է ապագայում ստուգութեանը մեծ դիւրութիւններ տալ։

Երբ մի շինութիւն չի վարձւում իր բացարձակ թանգութեան պատճառով, պէտք է իջեցնել գինը. այդպիսի մի լաւ օրինակ ունենք Աւ. Փիրոյեանի կտակած տան նկուղը, որ տարիներով դատարկ է։

Ը. $19^{11}/_{12}$ թ. հեռացրած վարձաւորների ապառիկները հաշէկշռում ցոյց են տրուած 17,373 ր. 19 կ. իսկ $19^{12}/_{13}$ թ. այդ գումարը դարձել է 24661 ր. 63 կ.։ Անշուշտ այդ գումարի մէջ կան անյուսալի առնելիքներ, որոնք իւրաքանչիւր տարի պէտք է մաս-մաս դեղչուեն։ Զգանձած վարձագինը $19^{11}/_{12}$ տ. վերջը եղել է 18760 ր. 83 կ. որ անում է 3 ամսեայ վարձագին, $19^{12}/_{13}$ տ. ցոյց է տուած 18197 ր. 03 կ.՝ 2 ամսեայ վարձագին. յանձնաժողովիս կարծիքով այդպիսի խոշոր գումարներ վարձաւորների վրայ պէտք է չմնայեն։

IV. Դրամական շրջանառութիւն

Ա. Վերատուչիչ յանձնաժողովս զանազան ժամանակներում ստուգել է $19^{11}/_{12}$ և $19^{12}/_{13}$ թ թ. ծախքի օրդերները մէջ-մէջ, համեմատել դրամարկղի հաշի հետ, յօդուածները ստացագիրների և օրդերների հետ, ստուգել է փաստաթղթեր՝ հաշիւներ, յուշագիրներ, վարձացուցակներ և այլն և գտել է ճիշտ ու համապատասխան։

Բ. Զանազան պարտապաններից Ասարխանի թեմի եկեղեցիները պարտ են մնացել 368 ր. 28 կ., որ ցարդ չի ստացուել։ Թիֆլիսի Նորաշէն եկեղեցու Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի Հոգաբարձութիւնը պարտ է մնացել 300 բուբ.։

Գ. Հաշէտուութեան այդ երկու տարիների ընթացքում Աւ. Փիրոյեանի տան շինութեան համար գրաւականով վերցրած օբլիգացիաները վաճառելով կուրսերի տարբերութիւնից առաջացել է 22,576 ր. 32 կ., որ յետոյ աւելացուել է շինութեան ար-

ժէքի վրայ, որ իրականապէս ծախսուած չլինելով պէտք է ցոյց տալ երբև վաստ կամ մի գումար, որը պէտք է հանգուցուի ժամանակի ընթացքում Ա. Փիրոյեանի շինութիւնից ստացուած արդիւնքով։

Դ. Հաշուէմատեաններում ցանկալի է, որ օրլիգացիաները պահուեն իրենց մանրամասն համարներով՝ ցոյց տուրեն լիսէրները, համարները և արժէքներն առանձին-առանձին, որպէսզի հնարաւոր լինի ստուգել։ Յատուկ ընթացիկ հաշուում եղած բոլոր տոկոսաբեր թղթերի ցանկը և մանրամասնութիւնը, դպրոցի ունեցած պարտքը հնարաւոր չեղաւ ստուգել, որովհետև չնայած յանձնաժողովիս կողմից եղած մի քանի անգամ պահանջին չտրուեցան ցանկացած տեղեկութիւնները, որը Հոգաբարձութիւնը պէտք է ստանար բանկից պաշտօնապէս վաւերացրած։

Ե. Թէ ստացած և թէ վճարելի տոկոսները նշանակելիս կարեոր է յիշել գումարը, որից ստացել են այդ տոկոսները և տոկոսի քանակը։

Զ. $19^{12}/_{13}$ թ. Հաշուէկշռի մէջ ցոյց տուած կառավարութիւնից եա ստանալի գումար 21,790 ր., տարիներ շարունակ անփոփոխ կերպով մնում է և այդ առթիւ դիտողութիւններ եղել են նախկին Վեր. Յանձնաժողովի կողմից։ Իմանալով գործը, յանձնաժողովս գտաւ, որ Հոգաբարձու պ. Յ. Ամիրխանեանը բանաւոր կերպով զեկուցել է, որ իր հաւաքած ստոյգ տեղեկութեան հիման վրայ Փոխարքայի դիւանատունը այդ գումարը ուղարկել է Էջմիածնի Սինօդին։ Հոգաբարձութիւնը մի քանի անգամ դիմել է Սինօդին գրութեամբ, պատգամաւորութեան միջոցով դիմել է հանգ. Վեհափառ Կաթողիկոսին, բայց մինչև օրս պատասխան չստանալով Հոգաբարձութիւնը որոշել է զեղջել այդ գումարը։ Յանձնաժողովս անհրաժեշտ է գտնում միջոցներ ձեռք առնել փաստային կերպով պարզելու թէ որտեղ է այդ գումարը և ինչու Սինօդը իբրև պաշտօնական հիմնարկութիւն չի պատասխանում։

Է. 1912 թ. է տեղի ունեցել գանձապահ Սողոմոն Ալիխանեանի գործած դրամական զեղծումը, որը իւրացրել է 4642 ր. 46 կ.։ Սոյն հարցը քննուեց նախկին պատգամաւորական ժողովում։ Հոգաբարձութիւնը դատի ենթարկելով նրան, ստացել է կատարողական թերթ։

V. Նախահաշուի իրագործումը 1911/12 թ.

Ա. Ուսումնարանական ծախքերը նախահաշուով ցոյց են տրուած 42527 ր., ծախսուել է 44277 ր. 52 կ., ուրեմն աւելի 1750 ր. 42 կ.։

Բ. Դիւանականը՝ աւելի 265 ր. 20 կ.

Դ. Անշարժ կալուածների ծախսերը՝ աւելի 6748 ր, 18 կ.

Դ. Կտակարարների կամքի կատարումը՝ աւելի 42 ր. 28 կ.

Ե. Տոկոսները՝ աւելի 9807 ր. 24 կ. և այլն։

Առհասարակ նախահաշուի դէմ աւելի է ծախսուած 22,211 ր. 75 կ. որը շատ մեծ տարբերութիւն է, թէպէտ նախահաշուի դէմ դպրոցն ունեցել է աւելի մուտք 12,922 ր. 75 կ.

VI Դատավարութիւն։

Կալուածների վարձագների վերաբերեալ դատավարութիւնը առհասարակ շատ է ձգձգուում և կան գործեր, որոնք տարիներ են քաշում. օր. 1912 թ. Նոյեմբերի 6-ին Արտաշէս Միքէլեանի դէմ դատ է սկսած, բայց մինչև այսօր չէ վերջացած։ Նոյն ժամանակուանից դատ է սկսած Վլադիմիր Սվանիձէի դէմ (600 ր.), մինչև այսօր ոչինչ չկայ։ Արշակ Թեւանցի դէմ դատ է սկսած դեռ 28 յուլիսի 1912 թ. (2500ր.) և դեռ ևս կատարողական թերթ չկայ և այլն։ Դարաւարութեան դանդաղելը խանգարում է և վարձագրքոյկների գոյութիւնը, որովհետև դատ բանալու դէպքում վարձագրքոյկը յանձնուում է դատարան և վարձաւորը մնում է առանց դրքոյկի։

Ցանկալի է արագացնել դատավարութիւնը։

VII Ուսումնական բաժին.

Ա. $19^{11}/_{12}$ թ. դպրոցն ունեցել է տարւայ վերջը 445 աշակերտ, $19^{12}/_{13}$ ր.՝ 420 աշակերտ. յանձնաժողովս առանձին ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ այս տարիներում դպրոցն ունեցել է յարմար և ընդարձակ շինութիւն և հասկանալի չէ, թէ ինչու այդքան քիչ է աշակերտութեան թիւը և ինչու հետզհետէ պակասում է, քանի որ ծախքերը հետզհետէ աւելանում են։

Բ. Աշակերտութեան յառաջադիմութեան վերաբերեալ նկատելի է հետևեալը. աշակերտութեան մեծամասնութիւնը թոյլ է եղել Հայոց լեզուից ($38^0/_0$ և $37,6^0/_0$), ռուսաց լեզուից ($37,8^0/_0$ և $41,6^0/_0$), թւաբանութիւնից ($26,1^0/_0$ և $28^0/_0$), նաև գրաբար Հայերէնից, որ բարձր դասարաններում է աւանդուում ($19,4^0/_0$ և $10^0/_0$)։ Սա ցաւալի երևոյթ է ազգային միջնակարգ դպրոցի համար, մայրենի լեզուն այդ աստիճան թոյլ պէտք է չլինի։ Այդ երկու տարիների ընթացքում 445-ից փոխել են 175 հոգի, որից պէտք է չլինի։ Այդ երկու տարիների ընթացքում 445-ից փոխել են 175 հոգի, որից աւարտել են 21 հոգի. 420 հոգուց փոխել են 155 հոգի, որից աւարտել են 17 հոգի. այստեղ ևս համեմատաբար յառաջադիմութեան քիչ արդիւնք է երևում և մօտ 60000 ր. ծախսուող դպրոցից աւելին պէտք է պահանջել։

Գ. 19¹¹/₁₂ թ. յատկացրած է եղել դասագրքեր հրատարակելու համար 880 ռուբլի. գումարը վճարել է դասագրքերի տպագրութեան հաւար և չէ յիշատակած թէ ինչ դասագրքեր են տպագրած, ում է վճարած գումարը։ Ցանձնաժողովս կարևոր է համարում դասագրքերի տպագրութեան գործը, իբրև կարևոր հասարակական մի գործ, դնել աւելի լայն հիմունքների վրայ (յայտարարութիւն, մրցումն և այլն)։

Դ. «Օժանդակութիւն չքաւոր աշակերտներին» վերնագրի տակ մէջ է բերուած նուիրաբերութիւնների մի ցուցակ 850 ռուբլու, որից 150 ռուբլի չի մտել դպրոցի ընդհանուր դրամարկղը, որով ոչ ելքի և ոչ մուտքի յօդուածները գոյութիւն չունեն ընդհանուր հաշուեմատեանում (տ. տ. Մաղաթեանից և Ղուկասեանից 50 ռուբ., տ. Զաւարեանից 25 ռ., պ. Ն. Աբէլեանից 25 ռ. և Ներ. դպ.-ի չքաւոր աշակ. նպաստ. ընկ.-ից 50 ռ.)։

Ցանկալի է, որ բոլոր նուիրաբերութիւնները մտնեն ընդհանուր դրամարկղ և այնտեղից տրուեն ծախսելու։

Ընդհանուր դիտողութիւններ.

Ա. Առ 1-ն նոյեմբերի 1914 թ. Առևտրական բանկի յատուկ ընթացիկ հաշուով № 422 դպրոցի պարաքն է համաձայն հաշուեմատեանների 71,159 ռ. 15 կ., որի դէմ դպրոցն ունի բանկում տոկոսաբեր թղթէր նոմինալ արժողութեամբ 149,200 ռուբլու։ Կուրսերի բարձր եղած ժամանակ երբ դպրոցը կարիք չունէր փողի, եթէ վաճառուէին դպրոցական տոկոսաբեր թղթերը 68000 ռուբլու, այն ժամանակ դպրոցը ստիպուած չէր լինի բանկին վճարել այն խոշոր տոկոսը՝ 8¹/₂—9-ը, որը ներկայումս վճարուում է։ Ցանձնաժողովս առաջարկում է տոկոսաբեր թղթերի կուրսը բարձրանալու դէպքում վաճառել այդպիսիները և պակասացնել յատուկ ընթացիկ հաշի պարտքը։

Բ. Ցանձնաժողովս վերջացնելով իր խօսքը ուրախութեամբ պէտք է արձանագրէ հետևեալը։

1. Դպրոցիս մեծ բարերար հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի հաշուով կառուցուել է դպրոցի հոյակապ նոր շէնքը, որի համար հանգուցեալ բարերարը տուել է 280.000 ռուբլի։

Մեծ բարերարի որդին՝ մեծարգոյ պ. Լեոն Մանթաշեանը իր և իր եղբայրների կողմից նուիրաբերել է 92000 ռուբ. շինութիւնը վերջացնելու համար. բացի այս մեծ բարերարի որդու պ. Լեոն Մանթաշեանի միջոցով Ա. Մանթաշեանի որդիներից 20,000 ռ, դպրոցի շարժական գոյքը դնելու համար. ուրեմն ընդամենը 392000 ռ., որից հաշուեատութեան տարեայ ընթացքում ստացած է եղել 352500 ռ., իսկ մնացածը ստացել է յետոյ։

2. Դ. Ի. Առաքելեանի ժառանգներից Հոգաբարձութիւնը ձեռք է բերել երկու տուն, մէկը Վագզալնայա փողոցում և միւսը Բեհրութեան փողոցում, որով կատարուել է մի շահաւէտ գործ և իրագործուել է հանգուցեալ Ն. Մ. Ցակոբեանի կտակը։

3. Շուկայում դատարկ գետնի վրայ շինուած է նոր փուռ, որի վրայ ծախսուած է 2721 ռ. 59 կ. և բերում է վարձ տարեկան 720 ռուբլի։

4. Գնուած է Շահմուրադեանի տունը Վանքի փոքր փողոցում 7085 ռ. 76 կ. արժողութեամբ, որը պարաք ունի 2538 ռ. 66 կ. իբրև Շուկան ամբողջացնող մի հողամաս։

5. Շուկայի եկամուտը զգալի և խոշոր չափով աւելացել է և ներկայումս տեղացիների կիրակնօրեայ մուտքը ամսական հասնում է մինչև 400 ռուբլու, իսկ բուդկանների և առևտրականների վարձագինը ստացում է 593 ռ. 50 կ.։ Այս հանգամանքը պէտք է վերագրել կալուածները կառավարելու այն հսկողութեանը, որ ունի Հոգաբարձութիւնը յանձին կալուածների նոր կառավարչի։

6. Ներկայումս վարձագրքոյկները պահւում են կանոնաւոր, կալուածների վարձները որոշ չափով բարձրացել են և գանձւում են աւելի կանոնաւոր, քան նախորդ տարիներում և այսպիսով կալուածների եկամուտն էլ զգալի չափով աւելացել է։

7. Հաշուապահութիւնը տարած է կանոնաւոր։

ՆԱԽԱԳԱՀ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ *Բժ. Տ. Թադէոսեան*

ԱՆԴԱՄՆԵՐ՝ { *Ա. Աւագեան*
Հ. Տէր-Ատուածատրեանց

Թիֆլիս
4-ին Նոյեմբերի
1914 թ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՒ

I. Գործավարութիւն

Ա. Հաշուապահական մատեաններում գործավարութեան բոլոր գործողութիւնները արդէն արձանագրուում են 1913/14 ուսումնական տարուանից։

Բ. Օրդերների վերաբերեալ յանձնաժողովի արած դիտողութիւնները արդէն կատարուում են 1913/14 ուսումնական տարուանից։

Այն բացը, որ յանձնաժողովը նկատել է օրդերների արմատների վերաբերմամբ ու կվերացվի։

Գ. Յանձնաժողովի զեկուցման գ. կէտում արած դիտողութիւնը ձևական տեսակէտից մի բացառիկ դէպք է, որ սակայն փաստ չէ պատճառել դպրոցի շահերին։ Պայմանագրքոյկներում անշուշտ հարկաւոր էր գրել զանազան ժամանակներում ստացուած վարձագները առանձին-առանձին։ Այդ բացը վերացուած է 1913/14 ուսումնական տարուանից և ստացած վարձագները գրուում են պայմանագրքոյկներում իր ժամանակին։

Դ. Փիրոյեանի շէնքի կառուցման գործերը տարուած են կանոնաւոր։ Այդ գործերում կցուած են բոլոր փաստաթղթերը ժամանակագրական կարգով։ Իսկ եթէ մի կամ երկու գործում սխալմամբ թղթերը կարուած են եղել ետ ու առաջ, դրանք պատահականութեան արդիւնք են։

II. Կատակները

Ա. Կատակների համար Հոգաբարձութիւնը կազմած ունի մի մատեան, ուր կարելի է մանրամասն ծանօթանալ կատակների բոլոր կէտերի հետ։ Էֆէնդեանի կատակով օրիորդների ամուսնութեան համար վիճակով ընկած գումարները հաշուապահական մատեաններում ցոյց են տուած չվճարած այն պատճառով, որ այդ գումարները տրրում են նրանց միմիայն ամուսնութիւնից յետոյ, որի համար քահանաները որպէս ապացոյց ներկայացնում են ամուսնութեան վկայականը։

Օրիորդներին չվճարած գումարները չի կարելի յատկացնել չքաւոր աշակերտների օգտին, այն պատճառով, որ եթէ մի քանի տարի անցնելուց յետոյ օրիորդները ներկայացնեն իրենց ամուսնութեան պատշաճաւոր վկայականները, Հոգաբարձութիւնը պարտաւոր է վճարել նրանց վիճակած գումարները։

Նունէ Եւանգուլեանի հոգեհանգստեան համար յատկացրած 75 ր. գործադրւում է համաձայն կտակի։ 1911, 1912 և 1913 թուականների հոգեհանգստեան 225 բուբլուց վճարւած է քահանաներին ժամոցադրամ 90 ր.. 75 ր. պահւած է չքաւոր աշակերտների օգտին, իսկ մնացած 60 ր. գործադրւած է նոյն տարիների յայտարարութիւնների տպագրութեան և այլ զանազան ծախսերի համար։

Բ. Հոգաբարձութեան գլխաւոր հոգսերից մինն է եղել լրացնելու անձեռնմխելի գումարները։ Սակայն որոշւած է նախ՝ հանգցնել դպրոցի անցեալ տարիների դեֆիցիտը, ապա լրացնել կտակարարների դրամագլուխը թէ 5% խնայողութեամբ և թէ դպրոցական հողերի վաճառումից գոյացած գումարներով։

Գ. Մինչև 1912/13 ուսումնական տարում հաշւապահական մատեաններում պատահական ստացւած նվիրաբերմունները գրւած են կտակարարների դրամագլխի տոկոսների հաշւում, իսկ այնուհետև այդպիսի գումարների համար պահւում են առանձին հաշիւներ։

Դ. Կտակարարների դրամագլխից ստացւած տոկոսների մնացորդը 1164 ռ. գործադրւել է հետևեալ տարում, որից յետոյ դրամագլուխը մնացել է անփոփոխ։

Ե. 1908 թվին հանգուցեալ Սարգիս Քոչարեանը դպրոցին կտակել է մի տուն, որ գտնւում է VII քաղաքամասում Դէսիմոնովսկի հրապարակի վերայ։ Կտակատար կարգել է իր եղբօր փեսայ—Միքայել Սարդարեանին։ Չնայած Հոգաբարձութեան բոլոր ջանքերին ու ձեռք առած միջոցներին, կտակատարը ոչ մի կերպ չի համաձայնւում յանձնելու տունը դպրոցին, որովհետև հանգուցեալը լինելով նրա պարտապանը, ձեռքին ունի 30 հազար բուբլու կտարողական թերթեր։ Հոգաբարձութիւնը նկատի առնելով այդ հանգամանքը, համարել է կտակը անյուսալի և գործը կարճել։

III. Կալւածների շահագործումը

Ա. Քանի որ այն ժամանակ Փիրոյեանցի կալւածքը նոր էր կառուցւել, ուստի դատարկ կրպակները տրւում էին վարձով հեռվեռեաէ։ Այժմ այդ շէնքում բացի մէկից դատարկ կրպակներ այլևս չկան։

Բ. Հոգաբարձութիւնը իւր ժամանակին չվճարող վարձաւորների դէմ դատ է սկսում։ Սակայն շրջանային դատարանում գործերը այնքան դանդաղ են ընթանում, որ շատ անգամ դպրոցի դատաստանական գործերը տևում են ամիսներ, նոյնիսկ տարի։

Գ. Որովհետև շուկայի սարայներում այն ժամանակ գտնւելիս են եղել կալւածների վերանորոգութեան և Փիրոյեանի նոր շէնքի կառուցման փայտեայ և թիթեղեայ նիւթեղէնները, ուստի և այդ տեղերը ձրի տրւած են եղել վարպետներ՝ Սահակ Օրդոյեանին և Սարգիս Քոչարեանին, որոնք պատրաստել են փայտեայ և թիթեղեայ պարագաներ՝ թէ Փիրոյեանի և թէ միւս շէնքերի համար։

Դ. Կալւածների հարկերը իւր ժամանակին չվճարելու պատճառը եղել է ոչ թէ անփութութեան արդիւնք, ինչպէս մասնաժողովը է շեշտել, այլ դպրոցի տնտեսական կացութիւնը հնարաւորութիւն չէ տւել, որովհետև, դպրոցը զրկւած է եղել Փիրոյեանի կալւածքի տարեկան մօտ 13000 ր. եկամտից, այնտեղ նոր շէնք կառուցանելու պատճառով։ Իսկ շուկան, որ նոր էր սկսել առևտրական կենտրոնատեղի դառնալ, համարեայ եկամուտ չէր բերում։ Այդ խոշոր բացերը զգալի չափով ազդելով դպրոցի բիւդջէի վրայ, Հոգաբարձութիւնը անկարող է եղել ընթացիկ ծախսերը հոգալուց յետոյ վճարել իւր ժամանակին և կալւածների հարկերը։

Ե. Դատարկ կրպակների վերաբերեալ Հոգաբարձութիւնը ունի որոշում, որով տնտեսական կառավարիչը ամեն նիստի գրաւոր զեկուցանում է, թէ որ կրպակը երբ է դատարկւել և որը երբ վարձով տրւել։ Այս մասին կազմւում է արձանագրութիւն և պատւէր տրւում հաշւապահին հաշւապահական մատեաններում նշանակելու։

Զ. Անցած տարիներից առաջացած ապառիկ գումարները քննում է Հոգաբարձութեան կողմից ընտրւած ֆինանսական մասնաժողովը բազմակողմանի կերպով։ Անյուսալի ապառիկ գումարները դուրս է հանւում հաշիւներից որպէս կորուստ, իսկ յուսալի ապառիկները գանձելու համար ձեռք են առնւում միջոցներ։

VI. Դրամական շրջանառութիւն

Բ. Աստրախանի թեմի եկեղեցիների վերայ մնացած 368 ր. 28 կ. ապառիկ գումարը ստանալու համար ձեռք են առւած հարկ եղած միջոցները։ Նորաշէն եկեղեցու Մարիամեան օրիորդաց դպրոցը վերաբացւելուց յետոյ, դպրոցիս Հոգաբարձութիւնը վերադարձրել է այդ դպրոցին հանգուցեալ Իզմիրեանի կտակած տունը, որի վրայ ծախս էր արել 500 ռ.։ Այս պարտքի դէմ Մարիամեան օրիորդաց դպրոցի Հոգաբարձութիւնը ստորագրութիւն է տւել, որով պարտաւորւել է 5 տարւայ ընթացքում հանգցնել։ Այդ գումարից 200 ր. արդէն ստացւել է, իսկ 300 ր. մնում է ստանալի։

Դ. Առևտրական բանկին երկու անգամ պաշտօնապէս գրւած է եղել ուղարկել վերաստուգող յանձնաժողովի համար նոյն բանկի դպրոցական յատուկ ընթացիկ հաշւում եղած տոկոսաբեր տոմսերի ցանկը և ցոյց տալ դպրոցական պարտքը։ Բանկը այդ բոլոր տեղեկութիւնները հաղորդել էր միայն այն ժամանակ, երբ արդէն վերաստուգող յանձնաժողովը վերջացրել էր իր գործը։

Զ. 1908 թվին Հոգաբարձութիւնը Փոխարքայի դիւանատանից տեղեկացել էր, որ կառավարութեան մօտ գտնւած եկեղեցապատկան գումարները ուղարկւած են Ս. Էջմիածին։ Այդ գումարների մէջ կան և դպրոցապատկան 21790 ր.։ Հոգաբարձութիւնը բազմիցս գիմել է Ս. Էջմիածնի Սինոթին վերադարձնելու յիշեալ գումարը, սակայն պատասխան չէ ստացել։ 1913 թվի նոյեմբեր ամսին երբ այդ հարցը նորից քննութեան առնւեց, Սրբազան նախագահը բացատրեց, որ այն ժամանակ հանգուցեալ Խրիմեան Կաթողիկոսը ստանալով Փոխարքայի դիւանատանից հայոց բոլոր եկեղեցապատկան գումարներից միմիայն 12,000 ր. ըստ իր բարեհայեցողութեամբ բաշխել է աւելի կարօտ եկեղեցիներին։ Հոգաբարձութիւնը նկատի առնելով Սրբազան նախագահի յայտարարութիւնը, որոշել է 21790 ր. համարել կորուստ և այս մասին զեկուցանել պատգամաւորական ժողովին։

Է. Նախահաշվի իրագործումը

Ա. Հոգաբարձութիւնը առհասարակ նախահաշվի սահմաններից դուրս է գալիս միմիայն այն դէպքերում, երբ տարւայ ընթացքում անակնկալ կերպով առաջ են գալիս անհրաժեշտ ծախսեր, որպիսին բնականաբար չէ կարող նախատեսել նախահաշիւը կազմելիս։

ՆԱԽԱԳԱՀ՝ *Մեսրոպ եպիսկոպոս*

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. Ամիրխանեան
Գ. Գարդիշեան
Յ. Իզիթեան
Գ. Կաֆեան
Ն. Կանկանեան
Ս. Լիսիցեան
Հ. Մելիքեան
Ռ. Յովհաննիսեան
Ա. Պապովեան
Յ. Սէյրանեան
Ն. Տիգրանեան
Լ. Քալանթարեան

ԳՈՐԾԱՎԱՐ՝ *Գ. Աստուածատրեան*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ

481
8011

ՀՀ Ազգային գրադարան
NL0231893

52 119
Арм.
4-162a